Գնաճային քննարկումներ կամ երբ պատճառները թողած՝ հետևանքների շուրջ ենք վիճում

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Ի՞նչ են ասում հասարակ մարդիկ

«Չգիտեմ, թե այդ ինչ 3 տոկոսի մասին են խոսում. ես զգում եմ, որ գները 20-ից 30 տոկոսով են աճել»:

«Մենք միս չենք ուտում, բայց նկատել ենք, որ կարագի, կաթի և այլ կաթնամթերքների գները շատ ավելի բարձր են, քան նախկինում»:

«Մենք բախտավոր ենք, քանի որ համեմատաբար բարձր եկամուտ ունենք, սակայն մեր աշխատանքը մշտական չի: Պարապուրդի կամ ֆիզարձակուրդում գտնվելու ընթացքում զգացինք տարբերությունը ու արդեն կարող ենք պատկերացնել, թե հարևան ընտանիքներն ինչպիսի վատ դրության մեջ են»:

«Ես գնումներ կատարում եմ երկու սուպերմարկետում: Իսկ փոքր գնումները փոքրիկ խանութներից եմ անում: Վերջին տարում ուշադրությամբ հետևում եմ գներին և կարող եմ գնահատել, որ շաբաթական ծախսս 30 տոկոսով ավելացել է»:

«Ակնհայտ հարվածը ստանում ես, երբ պետք է կա՛մ կրճատես այն, ինչը կարող ես, կա՛մ էլ հնարավորության դեպքում լրացուցիչ աշխատանք գտնես: Սա մեծացնում է և՛ սթրեսը, և՛ ներընտանեկան վեճերը, և՛ դժգոհության զգացումը: Եվ մի տեսակ սկսում ես ատել քաղաքական գործիչներին ու հասարակության այլ շերտերին մի այնպիսի ատելությամբ, որ դժվար է նկարագրել»:

«Վերջին 15 ամսում նկատել ենք երկու հիմնական երևույթ: Առաջինը, որ մեր մշտական խանութում ապրանքներն էապես թանկացել են: Երկրորդը, շատ ապրանքներ այժմ ավելի փոքր փաթեթներով են վաճառվում, այնպես, որ գները չեն իջել, բայց ավելի քիչ քանակություն ես գնում»:

«Աշխատավարձս քանի տարի է նույնն է, այնպես որ ես պետք է որոշակի փոփոխություններ կատարեմ, որպեսզի կարողանամ տան համար գնվող սնունդը պահել պատշաճ մակարդակի վրա: Սկսել եմ քիչ միս գնել: Թանկացումներն անսիրտ են և միջին գնորդի չարքաշ կյանքի ու լճացած աշխատավարձերի հակառակորդն են»:

Որտե՞ղ են հնչում այս կարծիքները

Տպավորություն է, թե վերը նշված մտքերը հայաստանյան բակերում կամ գրասենյակներում հնչած մտքերի արձանագրումն է: Իրականում սակայն, այս կարծիքները Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության շարքային քաղաքացիների կարծիքներն են, որոնք հրապարակվել են «Գարդիանում»: Ցանկացողները կարող են լրացուցիչ կարդալ այստեղ. goo.gl/q3Mmof:

Ավելին, «Գարդիանի» մեկնաբանությունների բաժնում կարելի է կարդալ 390 նույնաբովանդակ մտքեր՝ բոլորը բողոքում են գներից: Շատերն են բողոքում ապրանքների գներից, չեն սիրում քաղաքական գործիչներին, չեն հասկանում այն մասնագետներին, որոնք պնդում են, թե գները շատ չեն աճել: Այս կարծիքներն ասում են ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանում:

Ինչպե՞ս արձագանքել

Երբ մարդիկ բողոքում են, քաղաքական գործիչը պետք է արձագանքի: Հանրային պատասխանատուները պետք է պատասխան տան: Սակայն պետք է հասկանալ, թե ինչպիսի քաղաքականությամբ արձագանքել: Միայն խոսքերը բավարար չեն: Մարդկանց մեծամասնությունը կայունություն է սիրում: «Գները բարձրացել են: Եկե՛ք դրանք իջեցնենք»: Ահա այն հիմնական արձագանքը, որ մարդիկ ակնկալում են: Սակայն ի՞նչ է սա իրենից ներկայացնում: Մինչ այդ հարցին անդրադառնալը, նախ նշենք, որ Հայաստանում մի կարևոր խնդիր կա: Գների քննարկման ամբողջ ժամանակահատվածում ոչ-ոք չխոսեց բնականոն գնաճի՝ (core inflation)-ի մասին: Արտերկյա մամուլում հաճախ կարող ենք կարդալ հետևյալ միտքը. «Թեպետ բնականոն գնաճը չնչին է, մարդիկ բողոքում են թանկացումից: Ի՞նչ է սա նշանակում»: Տնտեսագետները վաղուց տարանջատում են կարճաժամկետ և երկարաժամկետ ցնցումները: Բնականոն գնաճը հաշվարկվում է՝ բացառելով այն ապրանքները, որոնց տատանումներն ավելի կտրուկ են: Այո՛, բնականոն գնաճն ավելի դանդաղաշարժ է, քան սպառողական գների ինդեքսը ու շատ ավելի դանդաղաշարժ է, քան որոշ ապրանքատեսակների կտրուկ տատանումները, որոնցից են Հայաստանի դեպքում կարագը, միսը և

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

վառելիքը: Սակայն բնականոն գնաճը ավելի ճշգրիտ է ցույց տալիս «դանդաղաշարժ» ապրանքների գնաճը: Օրինակ, 2017 թվականին բնականոն գնաճը կազմել է 3.6 տոկոս՝ ի տարբերություն 2.6 տոկոսանոց ինֆլյացիայի: Դա նշանակում է, որ եթե մի կողմ թողնենք սեզոնային տատանում ունեցող ապրանքները, ապա համընդհանուր գների մակարդակը համեմատաբար բարձր է եղել, քան ՍԳԻ-ն: Սակայն, միևնույն է, շատ ավելի ցածր է, քան այն, ինչ մարդիկ զգում են:

Մարդկանց զգացածն ու փաստերը

Ինչու՞ են մարդիկ այլ բան զգում, քան արձանագրում է վիճակագրությունը: Նախ, եկեք հասկանանք, որ կարելի է կազմել տարբեր զամբյուղներ ու հաշվել տարբեր գներ: Մինչև 50 հազար դրամ եկամուտ ունեցող «ընտանիքներն իրենց ամսական բյուջեի միջինը՝ 74 տոկոսը հատկացնում են կոմունալ վարձավճարներին» - փաստում է «Հետք» լրատվականը: (goo.gl/vj46oD): Այսինքն, այս դեպքում մարդկանց ծախսերի ահռելի մասի վրա կարագի թանկացումը չի ազդել: Սակայն մարդիկ սկսում են նկատել, որ պակասել է մնացած՝ 26 տոկոս եկամտի օգտակարությունը: Դիտարկենք այն տղամարդ վարորդին, որը տան ծախսերն ինքը չի կատարում, այլ վաստակածը տալիս է կնոջը՝ իր մոտ թողնելով միայն ավտոմեքենայի ծախսին հավասար եկամուտ: Բնական է, որ այս վարորդն անմիջապես կզգա, որ իր զումարը չի բավականացնում նույն քանակի վառելիք գնելու համար: Կզգա միայն այդ փաստը՝ ինքն իր գիտակից կյանքում կոմունալ ծախսեր չի վճարել: Սա է պատճառը, որ մարդկանց արձագանքը տարբեր է: Մենք չենք նկատում ծախսերի այն մասը, որոնք հիմնականում անում ենք, սակայն նկատում ենք այն ապրանքների գները, որոնք տատանվում են:

Ինչպե՞ս իջեցնել գները

Ավելի ճիշտ, ինչպես իջեցնենք այն մի քանի ապրանքատեսակների գները, որոնք կտրուկ են բարձրացել: Պատասխանը պարզ է. որպեսզի իջնի այդ մի քանի ապրանքատեսակի գները, պետք է իջեցնենք բնականոն գնաճը, այսինքն նաև այլ ապրանքատեսակների գները նույնպես: Այդ դեպքում, դրամավարկային քաղաքականության տեսակետից, կարիք կլինի բարձրացնել տոկոսադրույքները, որը կհանգեցնի ամբողջական պահանջարկի նվազման: Սա նշանակում է, որ այն արտադրողները, որոնք այլ շուկայում են աշխատում, ստիպված պետք է իջեցնեն նաև իրենց գները: Կշահեն սպառողները՝ կտուժեն տեղական արտադրողները: Նմանապես, նույն այս զամբյուղում եթե մեկ-երկու ապրանքի գին կտրուկ ընկնի, անհրաժեշտ կլինի բարձրացնել պահանջարկը: Սա էլ կհանգեցնի այլ ապրանքների գնաճի: Մասնագիտական կարծիքը այս հարցում մեկ պատասխան ունի. նայել երկարաժամկետ հետևանքներին, հետևել բնականոն գնաճին: Եթե ցանկանում ենք հասկանալ, թե մարդկանց վրա ինչ բեռ են ավելացրել թանկացումները, ապա ՍԳԻ-ն է այդ ցուցանիշը: Եթե ցանկանում ենք իմանալ, թե ինչպիսի քաղաքականություն պետք է վարի Կենտրոնական բանկը, ապա բնականոն գնաճն է այդ ցուցանիշը: Չպետք է մոռանալ, որ տնտեսական քաղաքականությունը ոչ միայն սպառողների, այլ նաև արտադրողների համար է ու ոչ միայն այսպահային, այլև երկարաժամկետ ազդեցություն է թողնում:

Համակերպվե՞լ, թե՞ ...

Գների մակարդակը չի արտացոլում տնտեսության ու մարդկանց բարեկեցության ամբողջական վիճակը: Անհրաժեշտ է շարունակաբար բարձրացնել տնտեսության մեջ եկամուտների բաշխման, սոցիալական քաղաքականության, դրա հասցեականության, մենաշնորհների ու շատ այլ հարցեր: Պարզապես երբ քննադատության թիրախ է դառնում գների հաշվման մեթոդաբանության ու անձնական զգացումների ու վիճակագրության անհամատեղելիությունը, ապա հրատապ հարցերը, որոնք պետք է մտնեն հանրային քաղաքականության օրակարգ, երկրորդական պլան են մղվում: Բուն խնդիրը թողած՝ հետևանքների դեմ արշավն ի վերջո նպաստելու է միայն մեկ բանի. որ Հայաստանը դոփի տեղում: Գները փաստ են, փաստի դեմ չեն պայքարում, ինչքան էլ որ դա տհաճ լինի: Մարդկային հույզերի հետևում կան իրական խնդիրներ, քննարկելի ու լուծելի խնդիրներ...

Համառոտագիրը մշակվել է «Դրամավարկային ու ֆինանսական հատվածի հաղորդակցության ռազմավարության բարելավման» ծրագրի շրջանակներում 2017թ. դեկտեմբերի 12-ին կայացած՝ «Ինտեգրացիոն գործընթացներ և գնաճ» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա:

Կլոր սեղանին մասնակցում էին ԱԺ պատգամավորներ, ՀՀ ԿԲ ներկայացուցիչներ, անկախ վերլուծաբաններ: